№ 1112/2795-22
21.01.2022

Երևան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ,
Հեռ.՝ 041 563363, էլ. հասցե՝ armenmirzoiian@gmail.com
«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի լրագրող
Արմեն Միրզոյանին

Հարգելի պարոն Միրզոյան

Ի պատասխան Ձեր հարցման (ԱԳՆ մուտքագրվել է 18.01.2022թ.)՝ հայտնում ենք, որ ՀՀ ԱԳ նախարարի և ԱԳՆ կենտրոնական ապարատի ղեկավար կազմի գլխավորությամբ եվրոպական երկրներում և միջազգային մի շարք կազմակերպություններում հավատարմագրված ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների հանդիպման ընթացքում, ԱԳ նախարարի ներկայացմամբ քննարկվել են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության շրջանակներում Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացի լիարժեք վերսկսման, տարածաշրջանում տնտեսական և տրանսպորտային ենթակառուցվածքների ապաշրջափակման, Հայաստան-Ադրբեջան սահմանագոտում կայունության և անվտանգության բարձրացման, ինչպես նաև՝ Հայաստան-Թուրքիա կարգավորման ուղղությամբ ընթացող գործընթացների մանրամասները: Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև եվրոպական երկրների հետ երկկողմ հարաբերություններում և մի շարք միջազգային կազմակերպությունների շրջանակներում արտաքին քաղաքական առաջնահերթությունների վերաբերյալ հարցեր: Հանդիպմանը մասնակցել են եվրոպական երկրներում, ինչպես նաև Եվրոպական տարածաշրջանում գործունեության ծավալող կամ այնտեղ գրասենյակ ունեցող միջազգային մի շարք կազմակերպություններում հավատարմագրված ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների բոլոր ղեկավարները:

ԱԳՆ կենտրոնական ապարատից հանդիպմանը մասնակցել են ՀՀ ԱԳ նախարարը, ԱԳՆ գլխավոր քարտուղարը, ԱԳ նախարարի տեղակալներ Վահե Գևորգյանը և Պարույր Հովհաննիսյանը, ԱԳ նախարարի խորհրդականներ Դավիթ Կարապետյանը և Վահան Կոստանյանը, ԱԳՆ քարտուղարության խորհրդական Սամվել Մելիքսեթյանը, ԱԳ նախարարի օգնական Ռոբերտ Աբիսողոմոնյանը և ԱԳՆ մամուլի քարտուղար Վահան Հունանյանը:

Լոգիստիկ նպատակահարմարությունը և արդյունավետ, համակողմանի և համապարփակ քննարկումների անցկացման կարևորությունը հաշվի առնելով՝ համաժողովը կազմակերպվել է Վիեննայում ՀՀ դեսպանության շենքում:

Տեղեկացնում ենք նաև, որ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի համաձայն ընդունված «ՀՀ ԱԳՆ համակարգի գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված ցանկը հաստատելու մասին» ՀՀ ԱԳ նախարարի 2017թ. հունիսի 16-ի թիվ 1002-Ն հրամանի հավելվածի 12-րդ կետի բ ենթակետով ԱԳՆ համակարգի գործուղման ծախսերը ենթակա են գաղտնագրման:

Հարգանքով՝

Recoverable Signature

X

ՍԵՐՈԲ ԲԵՋԱՆՅԱՆ

[redacted]

Սերոբ Բեջանյան
Լրատվության և հանրային
դիվանագիտության վարչության պետ

*Լրատվամիջոցների հետ կապի և*
*հանրային դիվանագիտության բաժին*
*հեռ. 060620234*